ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1954 Общественные науки

Ա. Ադամյան

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՌՈՒՍ-ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1809—1811 ԹԹ.)

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի և Անհատական արխիվների ֆոնդերում մեզ հաջողվեց հայտնաբերել երեք վավերագիր, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում 1809—1811 թվականներին Բալկաններում տեղի ունեցող ռուս-թյուրքական պատերազմի մասին։

11—12-րդ և հետագա դարերում, ինչպես հայտնի է, սելջուկների, մոնղոլների և թյուրքերի արշավանքների պատճառով Անիից և Հայաստանի այլ վայրերից բազմաթիվ հայեր գաղթեցին Բալկանները և բնակություն հաստատեցին Ռումինիայի ու Բուլգարիայի քաղաքներում։ Տեղի բնակչությունը սիրով ընդունեց և հյուրընկալեց գաղթական հայերին։ Հայերը Բալկաններում պարապում էին երկրագործությամբ, արհեստագործությամբ և վաճառականությամբ։

1809—1811 թվականներին, Բալկանյան պատերազմի ժամանակ, զգալի թվով հայեր կային՝ Ռուսչուկում, Եաշում, Շումլայում, Պոթիշանում, Թոնովայում և այլ վայրերում։ Բալկանները Թյուրքիայի կողմից բռնագրավվելուց հետո ինչպես բնիկ ժողովուրդները, այնպես էլ հայերը հարկային ծանր լծի տակ դրվեցին։ Սահմանվեց հետամնաց տնտեսական ռեժիմ, որը խիստ արգելակում էր այդ ժողովուրդների տնտեսության և կուլտուրայի զարգացումը։ Բացի այդ, թյուրքական բռնապետությունը ազգային և կրոնական հալածանք սկսեց այդ ժողովուրդների նկատմամբ։ Բուլգար, ռումին, մոլդավ, հայ և այլ ժողովուրդներն ատելությամբ էին լցված դեպի թյուրքական բռնապետությունը և մաքառում էին նրա դեմ՝ իրենց ազատության համար։ Նրանք իրենց ազատությունը ձեռք բերելու համար ի վիճակի չէին միայն իրենց ուժերով տապալելու բալկանյան ժողովուրդների ուսին դրած օսմանյան բռնապետության լուծը։ Այդ լուծը տապալելու համար նրանք միշտ դիմել են ռուս ազատարար մեծ ժողովրդի օգնությանը։

Երբ սկսվեց Բալկանյան պատերազմը, տեղի ժողովուրդը, ինչպես և հայերը, ամեն միջոցներով օգնեցին ռուսական բանակին՝ թյուրքական լուծը տապալելու համար։ Թյուրքիայի դեմ պայքարելու և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու բալկանյան ժողովուրդների տրամադրություններն արտահայտող մի շարք անձնավորություններ են եղել։ Նրանցից մենք ցանկանում ենք հիշատակել սույն վավերագրերի հետ կապված Մանուկ-բեյի և Գրիգոր Հովսեփյանի (Զաքարյան) մասին։

Հիշյալ անձնավորություններից ուշագրավ է Մանուկ-բեյը։

Մանուկ-բեյը ծնվել է 1763 թվականին Մոլդավիայի Ռուսչուկ քաղաքում և իր մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել թյուր-

քական բռնապետության տակ։ Նա ծառայության մեջ է մտել թյուրքական զինվորական դրասենյակում և վերջը բարձրացել Ռուսչուկ քաղաքի վառոդապետի աստիճանին և մեծ վստահություն է ձեռք բերել Օսմանյան արքունիքում։ Սակայն ականատես լինելով Բալկանների ժողովուրդներին, այդ թվում և հայերին, Օսմանյան պետության կողմից հասցրած տառապանքներին, նրա մեջ միտք է հղանում՝ օգնելու ռուսական կառավարության՝ միացնելու Բալկանները Ռուսաստանին։ Նա 1805—1811 թվականների Բալկանյան պատերազմի շրջանում գաղտնի հարաբերությունների մեջ է մտնում ռուսական կառավարության հետ և բոլոր միջոցներով օգնում ռուսական բանակին, նրա հրամանատարությանը։

1809 թվականին Դանուբի ճակատի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար է նշանակվում Պ. Ի. Բագրատիոնը, որը մի քանի փայլուն հաղթանակներ է տանում թյուրքական բանակի դեմ։ Այդ կռիվներում ռուսական բանակին տեղական հայերի միջոցով մեծ օգնություն է ցույց տալիս Մանուկ-բեյը։ Այդ տեսակետից ուշագրավ է 1810 թվականի մարտի 12-ին գեներալ Պ. Ի. Բագրատիոնի Մանուկ-բեյին տված վկայագիրը այն մասին, որ Մանուկ-բեյը Դանուբի երկրամասին վերաբերող շատ կարևոր տեղեկություններ է հաղորդել ռուսական բանակի գլխավոր հրամանատարությանը և մեծ ծառայություններ մատուցել բանակին՝ Դանուբում տեղի ունեցող ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ։ Ահա Բագրատիոնի Մանուկ-բեյին տված վկայագիրը.

«Մանուկ Պեյ՝ գլխաւոր թարգման դրան առանձին և արդիւնաւոր ջանադրութեամբ ի կարեւոր և յօգտակարագոյն գործս պետութեան եցոյց ի բարիօք ծառայութեան օգոստափառ կայսեր մերում։ Տայր ինձ միշտ զկարեւոր խորհուրդս վասն քաղաքացն եղելոց յայն կոյս Դանուբայ և զնամբաւան, զորս առնոյր յայնմ կողմանէ։ Ոչ շատ համարեալ այս օրինակ յատուկ ծառայութիւնն եւ ես զմեծամեծ նպաստս երկրին Վալաքիոյ ամենահարկաւոր ի վտանգաւորագոյն ժամանակի առ հոգալոյ զպիտոյս զորաց կայսեր։ Ես պարտ անձին վարկայ ծանուցանել կայսեր և զծառայութիւնն և զանձնանուիրութիւն և զարժանաւորութիւն նորա։ Սակայն բաց այսմանէ պարտական եմ յանձն առնել զնա առանձնական պաշտպանութեան և պատուոյ ամենայն զինուորական և (սիվիլ) մեծաւորաց, այնպէս և կառավարութեան այսր երկրի, որոյ վասն եւս զայս վկայագիր կնքով և ստորագրութեամբ իմով ի 12 մարտի 1810 Պուքրեշտ։

Օգոստափառ կայսեր իմոյ և ամենողորմ թագաւորի կենարար ինքնակալի սպարապետ զօրացն եղելոյ ի Մոլդավիա ի Վալաքիա ի Պեսարապիա և բնդ աջմէ Դանուբայ գլուխ Կվարգիյնի եկբր գնդի Ասպետ սրբոյն Անդրեայի, Սրբոյն Ալեքսանդրի Նեւսկոյ, սրբոյն Գէորգեայ Բ, սրբոյն Վլադիմիրայ Ա, սրբոյն Աննայի Ա, և սրբոյն Յովհաննու Երուսաղէմացւոյ, Մարի Թերեզայոյ գերմանացւոյ, Ասպետ Սեաւ և կամիր արծուեաց բրուսաց և սրբոյն Մօրեսայ և սրբոյն Ղազարայ Սարդենիոյ քնեազ՝

ՊԱՔՐԱԹԻՈՆ»[1]։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Մսերյանների արխիվ, թղթ. № 209, վավ. № 2113։

1810 թվականի հունվարին, Բագրատիոնին այլ աշխատանքի փոխադրելուց հետո, նրան փոխարինում է Ն. Մ. Կամենսկին, որը ծանոթանալով Մանուկ-բեյին, սերտ բարեկամական հարաբերություններ է ստեղծում նրա հետ։ Ռուսչուկի և Շումլայի կոիվների ժամանակ Կամենսկին իր մոտ է հրավիրում Մանուկ-բեյին և ուղարկում ռուսական բանակի պաշարած Ռուսչուկ քաղաքում թյուրքական հրամանատարության հետ բանակցելու՝ քաղաքը ռուսներին հանձնելու համար։ Մանուկ-բեյը վարում է այդ բանակցությունը Ռուսչուկի թյուրքական բանակի հրամանատարության հետ և համոզում նրանց՝ հանձնելու քաղաքը ռուսական բանակին։ Այդ առթիվ կարևոր է 1810 թվականի հունիսի 9-ի Շումլայի և Սիլիստրի ճանապարհից գրած Կամենսկու նամակը Մանուկ-բեյին, ուր նա վկայում է, որ Մանուկ-բեյը մեծ ծառայություններ է մատուցել Ռուսաստանին և շարունակում է իր այդ ծառայությունները, որի համար կայսրը նրան արժանացրել է Ս. Վլադիմիր 3-րդ աստիճանի շքանշանի։ Նամակում Կամենսկին Մանուկ-բեյին գրում է. «Նամակ սպարապետին ռուսաց կրաֆ Քամենսքեայ առ Մանուկ-բեյ։

Տեր իմ։ Զջանադրութիւն Ձեր ծառայութեան ի գործս կայսեր մերոյ ճանաչելով յայնց ապացուցութեանց զորս անընդհատ շարունակէք, խնդագին պարտաւորութիւն ինձ համարեցայ ծանուցանելով Նորին Կայսերական Մեծութեան խնդրել զնշան ինչ շնորհակալութեան նորա յաղաքս ձեր։ Ըստ խնդրանաց իմոց օգոստափառ կայսրն մեր բարեհաճեց ամենազորմածաբար տալ Ձեզ զնշան Գ, զաստիճանի ասպետութեան սրբոյն Վլադիմիրոյ։ Ընկալջիք դուք զայն նշան ի կեներալ մայոր Էնկելհարթայ՝ որում առաքեմս։ Յառաջնմէ իսկ հաւատացեալ եմ, զի այս նշան ոգորմութեան կայսեր մերոյ ի վերա ձեր ունի առաւել ուլ փութաջան սէր Ձեր առ Ռուսսիա։

Արդարև գուարճութիւն է ինձ շնորհավորել Ձեզ զայս, և սովին ցուցանել Ձեզ զհաւաստիս սէրոյ իմոյ առ Ձեզ։ Ոչ նուազ քան զայս գուարճացայց եթէ զհետ այսորիկ և զայլ նորագոյնսն կցորդել կարիցեմ և ցանկամ դէպ ծամու կատարմանն։

Պատիւ ունիմ առանձին մեծարանօք

Տէր իմ

ամենախոնարհ և հպատակ ծառայ Ձեր

ՆԻԿՈԼԱՅ ԿՐԱՖ ՔԱՄԵՆՍԿԻ։

ի կիսաճանապարհին որ ընդ մէջ
Սելեսթրիոյ և Շումլեայ.
9 յունիս 1810»[1]։

Ինչ խոսք, որ Բալկանների ժողովուրդների և Մանուկ-բեյի նման անձնավորությունների գործոն օգնությունը ռուսական բանակին նպաստում են ռուսական զենքի հաղթանակին և թյուրքական բանակի պարտությանը Բալկաններում։

Բալկանյան պատերազմի իրադարձությունների պատմության համար արժեքավոր վավերագիր է երրորդ վավերագիրը, որի հեղինակը Եաշի (Մոլ-

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Մ. Մսերյանների արխիվ, թղթ. № 209, վավ. № 2414։

դավիա) հաջորդ, հետագայում Բեսարաբիայի թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Հովսեփյանն է (Զարարյան), որն այդ նամակը 1811 թվականին ուղարկել է Էջմիածնի Եփրեմ կաթողիկոսին, որով ցանկացել է իրազեկ դարձնել նրան այն ժամանակ հասարակական միտքը հուզող Բալկանների քաղաքական իրադարձությունների մասին։ Ըստ, Ռ. Հովսեփյանը 18-րդ դարի վերջում ռուս-հայ բարեկամական հարաբերությունների մեջ աչքի ընկնող դեր ունեցող Հովսեփ Արղությանի զինակիցներից է (Ռ. Հովսեփյանը մահացել է 1827 թվականին) և սերտ կապեր է ունեցել ռուս հասարակական, քաղաքական, անգամ գրական շրջանների հետ։ Այսպես, Մատենադարանի մի քանի վավերագրերից երևում է, որ 1825 թվականին նա Հովհաննես արքեպիսկոպոսի հետ մասնակցել է Նիկոլայ I-ի օծման հանդեսին և թագավորին այցելելու ժամանակ խնդրել նրան օգնելու՝ Հայաստանը պարսկական լծից ազատելու գործում։

Ցարական կառավարությունը Գ. Հովսեփյանին ճանաչում էր որպես Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ և Բալկանների հետ լավ ծանոթ ու գործունյա մի անձնավորության։

Երբ սկսվում է Բալկանների ռուս-թյուրքական պատերազմը, ռուսական կառավարությունը Գ. Հովսեփյանին ուղարկում է ռազմաճակատ, որոշ հանձնարարություններով։

1811 թվականի վերև հիշված նամակից երևում է, որ Ռ. Հովսեփյանն անձամբ մասնակցել է 1810—1811 թվականների Դանուբի (Դունայի) ափերին տեղի ունեցող ռուս-թյուրքական պատերազմին, 1810 թվականի ամռանը նա մեկնում է Դանուբ և բուլգարական Ռուսչուկ քաղաքի մոտ միանում ռուսական բանակին։ Նրա ժամանումից 15 օր հետո այդ պորամասն է եկել Դանուբի ռուսական բանակի գլխավոր հրամանատար Նիկոլայ Միխայլովիչ Կամենսկին, որն անձամբ ընդունել է Գ. Հովսեփյանին։

Ռ. Հովսեփյանն իր նամակում հանգամանորեն նկարագրում է 1810—1811 թվականների ռուս-թյուրքական պատերազմը որպես ականատեսի և մասնակցի։ Նամակում առանձնապես ուշադրավ է Դանուբի ափին գտնվող բուլգարական Ռուսչուկ քաղաքի գրավման համար ռուսների կողմից կազմակերպված գրոհների նկարագրությունը։

«Յետ արձակելոյն իմոյ զծառայական յայտարարութիւն տեսան իմոյ անցեալ յամի յունիսի 22-ին,—գրում է նա,—զկնի չորից աւուրց՝ ուղի անկայ առ քաջ զօրսն ռուսաց, ըստ հրամանի կողմանցս եղեալ կայերական զօրաց զօրապետ՝ գրաֆ Կամենցկոյ։ Հանդէպ Ուրուշչուղու եղեալ բանակն, յետ հնգետասան աւուրց՝ ուր եկն և ինքն գրաֆինձ[1]։

Հարց է առաջ գալիս, թե նպատակով է ռուսական բանակ մտել Գ. Հովսեփյանը։ Նա բանակ էր մտել միայն մի նպատակով՝ թյուրքերի դեմ տարվող պայքարում օգտակար լինել ռուսական բանակին։

Դանուբի ռուսական բանակի ընդհանուր հրամանատար գեներալ Կամենսկին Հովսեփյանի տրամադրության տակ է դնում 150 զինվոր, հավանաբար՝ հայեր։ Եվ Հովսեփյանն իր զինվորներով, ռուսական կողող թիկնապահ զորամասերի հետ, առաջ է շարժվում ու ամեն կերպ աշխա-

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական գիվան, թղթ. № 22ր, վավ. № 33։

տում է ազատագրված վայրերի քրիստոնյա ժողովուրդներին, հատկապես հայերին, խորհուրդ տալ ռուսաց հովանավորության տակ մտնելու և օգնելու ռուսական զորամասերին՝ Թյուրքերի դեմ մղվող այդ պատերազմում։

Ռ. Հովսեփյանը և նրա զինվորները մասնակցել են Ռուսչուկ քաղաքի գրավման համար մղված ճակատամարտերին, որոնք տևել են մի քանի շաբաթ, քաղաքը վերցվել է կատաղի կռիվներից հետո։

Այդ առթիվ նա գրում է. «Վասնորոյ պատրաստեալ կայմեաց զզօրս իւր ամենայն պատրաստութեամբ, նոյն ամսոյ 21, որ ի լուսանալ աւուր Երկրորդի շտուրմայիւ մտցեն ի քաղաքն և սրոյն մատնեսցեն զամենայն հակառակորդս, ուստի բաժանեաց զօրս իւր ի չորս գունտս, և կարգեաց ի վերայ չորից կողմանցն քաղաքի, և ինձ ևս հրամայեաց ընդ յետի թիքնապահ գնալոյն, մտնել ի քաղաքն և պաշտպանել հասարակօրեն զքրիստոնեայս, վասնորոյ և յատկացոյց ինձ ի նոյն յառաջարկութիւն հարիւր և հիսուն զօրականս...»[1]։

Ռուսչուկը հանդիսանում էր միջին Դանուբի երկրամասի բանալին, այդ պատճառով Թյուրքերը ռազմական մեծ ուժեր էին կենտրոնացրել այդտեղ և բազմաթիվ ամրություններ կառուցել ռուսներին դիմադրելու համար։

Ռուսական զորամասերն անընդհատ գրոհում էին Ռուսչուկի վրա, իսկ Թյուրքերը կատաղի դիմադրում էին նրանց և ամեն կերպ աշխատում իրենց ձեռքը պահել այդ քաղաքը։

Այս մարտերում իր զինվորներով մասնակցել է նաև Գ. Հովսեփյանը։ Ռուսչուկի գրոհներից մեկում, ինչպես երևում է, Հովսեփյանը թեթև վիրավորվում է։ Ռեներալի կարգադրությամբ նրան անմիջապես բուժավայր են տեղափոխում։ Այդտեղ նրան և մյուս վիրավորներին այցելության է գալիս անձամբ ինքը՝ գլխավոր հրամանատար Կամենսկին, որը վերին աստիճանի հաղթական վերաբերմունք է ցույց տալիս դեպի վիրավորները, քաջալերում է Գրիգոր Հովսեփյանին և նրա մատուցած լավագույն ծառայությունների համար արժանի հատուցում է խոստանում նրան և այդ կռիվներին մասնակցած հայերին։

Այդ մասին Գ. Հովսեփյանը գրում է. «...ի նմին պահու լուայ զճայթոց մի ընդ գլխովս ձախակողմեան, որ անկայ ի գետին անշունչ, և ենեռալին հրաման տուեալ, թողուլ զինքն և զիս բառնալ և տանել ի ապահով տեղի մի և ապա գալ և զինքն առնուլ... Եւ ենեռալին անդր հասեալ արձակեաց սերժանտ մի առ կառեքն որ բերեալ բարձին զմեզ և տարին ի մեծ բանակն, ուր իսկոյն եկն ի տես պայծառ դրաֆն և յուսադրութեամբ քաջալերէր, և զմեծամեծս խոստանայր ինձ և ազգին իմոյ, վասն այսքան անհամեմատ անձնապիր ծառայութեան իմոյ, յօգուտ ազգին և ի հարազատութիւն Գայսերդ»։

Ռուսական քաջերի զորքերը շարունակում են իրենց գրոհները պաշարված Ռուսչուկ քաղաքի բերդի վրա, զրկում են նրանց բոլոր տեսակի մատակարարումներից։ Թյուրքերը վերջապես ծունկի են գալիս ռուսական

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Ընդհանրական բաժին, կաթողիկոսական գիվան, թղթ. № 22 բ, վավ. № 33։

[2] Նույն ձեռագիրը։

ուժի առաջ և անձնատուր լինում։ 1810 թվականի սեպտեմբերի 15-ին Ռուսչուկը հանձնվում է ռուսական զորքերի գլխավոր հրամանատարությանը։ Ռուսական զորքերի հետ Ռուսչուկ է մտնում Գրիգոր Հովսեփյանն իր դինվորներով և այստեղ հանդիպում Մանուկ-բեյին, որը ինչպես նշեցինք վերևում, գնացել էր թյուրքերի հետ բանակցելու ռուսներին քաղաքը հանձնելու համար։ Ռուսչուկը գրավելուց հետո ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունն այդ պատերազմում ռուսական բանակին մատուցած ծառայությունների համար՝ Եաշի, Պոթիշանի և Ռուսչուկ քաղաքների հայ քահանաներին պարգևատրում է խաչերով, իսկ մի աշխարհականի՝ ոսկե մեդալով։

Այդ մասին նա գրում է. «Ես մեծապէս շնորհակալութիւնս ունիմ ի Նորին Պայծառութենէ, զի ի ձեռն Նորա ընկալայ ի Նորին Կայսերական Մեծութենէ, վասն երեք ավագ քահանայից՝ խաչ, Եաշու Տեր Մարկոսին, Փոթիշանու Տեր Առաքելին և Ուրուշչուքու Տեր Օհաննէսին, և իմ ընդհանրական վերի, Ձերդ հարազատ Մարտիրոս Հաջիգզեանին, ոսկէ մեդալ մեծի վերայ կապոյտ լենթայի, որ փառաւորեալ է ի մէջ ամենայն այլազգեացն»[1]։

Ռուսչուկի գրավումից առաջ, Գ. Հովսեփյանը ռուսաց կայսրի կողմից պարգևատրվում է Ս. Աննայի երկրորդ աստիճանի շքանշանով։ Ի դեպ, հայ զորավարներից Շումլայի, Ռուսչուկի և այլ քաղաքների գրավման ժամանակ ռազմական բոլոր գործողություններին մասնակցել է մայոր (հետագայում գեներալ) Վ. Գ. Մադաթովը, որը ցուցաբերելով ռազմական տաղանդ և քաջություն այդ պատերազմում, բարձրացել է փոխ գնդապետի աստիճանի։

Բացի Դանուբի 1810—1811 թվականների ռուս-թյուրքական պատերազմից, հիշյալ վավերագրերում հիշատակություն կա նաև ռուս մեծ զորավար Կուտուզովին 1811 թվականին Դանուբի ռուսական բանակի գլխավոր հրամանատար նշանակելու մասին, որին Գ. Հովսեփյանը համարում է հայ ժողովրդի բարերար, նկատի ունենալով Կուտուզովի կատարած կարևոր դերը՝ հայ-ռուս բարեկամական հարաբերություններում։

Այդ մասին նա գրում է. «Յունվար ամսեանն պայծառ գրաֆ Կամինցկին ծանր հիւանդացեալ և մինչև ցմահ եղեալ, արձակեցաւ ի պաշտօնէ և փոխանակ Նորա կարգուեցաւ Պլենիշչի Կուտուզովն՝ հին ծանօթ և բարեկամ մեր, որ առաջին պատերազմին, ի ժամանակս քնեազ Պոտեմկինի գոմենտանթն էր Իսմայիլու և մեծ բարերարութիւն ցուցեալ հայոց միջնորդութեամբ լուսահոգի տեառնս...»[2]։

Անհրաժեշտ է նշել, որ 18-րդ դարի վերջին քառորդում ռուս հռչակավոր զորավարներ՝ Սուվորովը և Կուտուզովը ցուցաբերել են բացառիկ ուշադրություն Ռուսաստանում գտնված հայ համայնքների նկատմամբ, համայնքներ, որոնք հետագայում մեծ դեր խաղացին ինչպես հայ-ռուսական բարեկամության ամրապնդման, այնպես էլ հայ ժողովրդի կուլտուրլուսավորական գործում։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական ֆիվան, թղթ. № 22բ, վավ. № 33։

[2] Նույն վավերագիրը։

Նամակի վերջում նա ավելացնում է. «Այժմ թէպէտ ընդ մեր կայսրութեան խաղաղ երևին, ապա բանքն պղտորեալ ցուցանէ...»[1].

Որոք, այդ ժամանակ Եվրոպայում անհանգստություն էր տիրում։ Նապոլեոնը նախապատրաստվում էր Ռուսաստանի վրա հարձակվելու համար։ Ռուսաստանը շտապում էր ավարտել Թյուրքիայի դեմ մղվող պատերազմը, որը ձգձգվում էր։ Բալկանյան պատերազմը արագ և հաջողությամբ ավարտեց ռուս մեծ զորավար Կուտուզովը 1811 թվականին Դանուբի ռուսական բանակի գլխավոր հրամանատար նշանակվելուց հետո։ Կուտուզովը խողեց Ռուսչուկ քաղաքը և անցավ Դանուբի մյուս ափը, հանկարծակիի բերեց թյուրքական բանակին և անասելի ջարդ տվեց թյուրքական բանակին, որը հետապնդում էր Կուտուզովին։ Պարտվեց Թյուրքիան, որից հետո թյուրքական հրամանատարությունը հաշտություն խնդրեց Ռուսաստանից։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. № 22բ, վավ. № 33։